

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

(Պատրաստողը գիտում են ուղղակի
Тифлис. Редакция „Миръ“

ՄԵՆԿ

Ժրագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Կացի կիրակի և տոն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր թաւին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՅԻՆԻՒՆ

Թատրոնական գործը. — Ն երբ ին տեսու
թիւն: Նամակ Նրիս-Պարայից: Նամակ խմբագրին:
Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին: Ներքին
լուրեր: — Արտաքին տեսութիւն: Յոստատ
տան: Ֆրանսիա: Բոլորիս: — «Մշակի» հեռագիր
ներ:

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Մինչև որ կառուցվում էր
Երծրունու թատրոնը, մեր հա
յոց թատրոնատէր ինտելիգենցիան
հիացած էր ցոյց տալիս իրան,
յորդորում էր թատրոնի տէրե
րին շուտով վերջացնել շինութիւ
նը, դահլիճը և բեմը թէ իրանց
ընդարձակութեամբ և թէ շինու
թեան ձևի կողմից բաւականա
ցուցիչ և յարմար էր գտնում տե
ղական ներկայացումների համար:
Թիֆլիսի հայոց հասարակութիւ
նը, մի քանի պարոնների սկզբնա
ւորութեամբ սկսեց փողեր հաւա
քել և հաւաքեց մօտ ութ հա
զար ռուբլ որպէս թատրոնական
հիմնական գրամագրութիւն: Կազմվե
ցաւ կոմիտէ, որ պէտք է կազ
մակերպէր խումբը, պատուիրէր
գզեստները և գէկորացիաները և
առաջ տանէր հայոց թատրոնա
կան գործը: Թատրոնի տէրերը
մեծ զիջումներ արին հայոց բեմին,
հայերին իրաւունք տրվեցաւ հինգ
տարի շարունակ բոլոր կիրակի օ
րերը խաղալ նրանց խոստում
տրվեցաւ որ բացի կոմիտէի
խումբից ոչ մի խումբին, առանց
կոմիտէի համաձայնութեան, չի
թող տրվի խաղալ նոր թատրոնի
բեմի վրա, այն րօպէից երբ կօն
տրակտը ստորագրված լինելով
կոմիտէտը կը սկսի իր գործու
նէութիւնը: Հայոց խմբից վերջ
վում էր միայն 20% ընդհանուր
մուտքից, բացի սորանից տէրերը
պարտաւորվում էին գնել այն բո
լոր գէկորացիաները, որ կը պա
տուիրի կոմիտէտը: Կոմիտէի
անդամները իրանց գոհ ցոյց տուե
ցին այդ պայմաններից և հրապա
րակապէս յայտնեցին որ կոմիտէ
ի նախագահ, իշխան Ն. Ման
տունուն յանձնվում է կօնտրակտ
կապել թատրոնի տիրոջ հետ:
Մնացում է բաւական ժամանակ
և լավում է որ կոմիտէտը բանակ
ցութիւններ է սկսել պ. Պալմի

հետ, Մանուկյին թատրոնում
հայոց ներկայացումներ տալու հա
մար: Կոմիտէտը վերջապէս նիստ
է կայացնում և կանչելով թատ
րոնի տիրոջ, յայտնում է որ նրա
առաջարկված պայմանները ծանր
են և պահանջում է զիջումներ:
Մի ժամանակ թատրոնի տէրը
յայտնում է որ համաձայն է մի
տարու շաբաթ մի անգամ (բայց
ոչ անպատճառ կիրակի օրերը)
տալ իր թատրոնը հայոց խմբին
անվարձ, բացի երեկոյի 20 ռուբլ
ծախսից: Մի և նոյն ժամանակ
պարտաւորվում է գնել կոմիտէի
պատուիրած գէկորացիաները: Կո
միտէի անդամները ցոյց են տա
լիս որ շատ շնորհակալ են թատ
րոնի տիրոջից, բայց մի և նոյն
ժամանակ շարունակում են իրանց
բանակցութիւնները պ. Պալմի հետ,
գտնելով որ անխաճ թատրոն էլ
իրանց համար շահաւէտ չէ...
Վերջապէս յայտնում են որ ոչինչ
չեն կարող վճռել մինչև իշխան
Թումանյանի վերադարձը...
Եւ մեր կոմիտէի անդամ
ները կարծում են, որ թա
տրոնի տէրը, որ արդէն հրաժար
վել է կոմիտէի անդամակցու
թիւնից, խղճմունքով ամեն տե
սակ զիջումներ անելուց յետոյ կու
զենայ խաղալի գաւառ իրանց
ինտրիգաների, իրանց անձնական
կրքերի... Պէտք է կարծել որ նա
չի սպասի պատաւոր նախագահ
իշխանի վերադարձին և կը տեսնի
իր պատրաստութիւնները, բայց
մանաւանդ չի ուզենայ գործ ու
նենալ կոմիտէի հինգ անդամնե
րի հետ, առանց իշխ. Թումանյանի
ներկայութեան, որոնք իրանք ի
րանց անընդունակ են յայտնում
որ և է գործ վճռելու, իրանց
վրա իշխանի նախագահութիւնը
չունենալով...
Մայիս է ամեն բան հայերի
մէջ: Բայց այն օրը որ վճռվեցաւ
հարցը, ինչքան գինի խմվեցաւ,
ինչքան գէղեցիկ ճառեր կարդաց
վեցան, ինչքան վստահ և ոգևոր
ված խօսում էին միութեան, գոր
ծի աշողութեան և հայոց թատ
րոնական գործի ծաղկման մասին...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԻՄԲԱԳՐԻՆ

2 յունիս

Թէպէտ կովկասի լեռնաշխարհի կողմից մեր
տէրութեան հասցրած վնասները անհաշիւ են,
թէպէտ Գաղտանի, Չեչենտանի և Աբխազիայի
խառն գոհերը անօրինակելի են և չափազանց,
բայց պատմականորէն այդ լեռնաշխարհի տարրերը
պահելով իրանց մէջ նախապատկանական կեանքի շատ
սկզբնականները և պարզութիւնը, հեռավար չը լի
նելով այն աստիճան ապակիմանք մահմադարական
կրօնի ազդեցութիւնից, որչափ այդ կրօնի ուրիշ
տեղի հին գաւառները, մնալով կովկասում, ի
րանց հայրենիքում այդ թաղով ազդեցութիւններ կա
րող էին շատ մօտաւոր ազգաբնակչութեան ըմբռնելու
առաւելութեան և իրանցին նրան ոչ պա
կաս հեշտութեամբ, քան թէ կովկասի աւելի իրա
ւորական ազդեցութեան, ինչպէս հայերը և վրացիք:
Բայց ցատկայարար ճակատագիրը ուրիշ կերպ
անորինեց. կովկասի ժայռածուռն արմիւնները նա
խապատու համարեցին վտարանդի և ընտելաց
նել Թիֆլիսի հրաժապ երկրի տակ, Միջագե
տում և առհասարակ Անատոլիայի ամենատար
չիւրում, քան թէ չգրել այն յաղթութեան դրօշակի
առաջ, որի գէտ գէտ են բռնել վաթսուս տարից
աւելի: Եւ այսպէս Մոսկովի իշխանութեանը չը
վիճակվեց տեսնել այն լեռնական սերունդը, որը
իր հայրական թուրք և խանչալը պիտի փոխէր
գրքի և գրչի... Իսկ ի՞նչ գտնւոյ աշխարհներին, ո
րոնք դրել են այժմ իրանց ոտը նմանապէս գաղ
թականութեան կորստաբեր ճանապարհի վրա,
պիտի նկատուած որ այս քաջամարտիկ ազգը ներ
կայացնում է բոլոր լեռնականներին էլ աւելի մեծ
դրաւական գրիւն կարծ ժամանակում խաղաղաւոր
կեանքի բարձր և գէղեցիկ տեղ բռնել արօր և ման
գաղ: Այս կարծիքը երաշխաւորվում է նրանով որ
աշխարհները պահած լինելով ամենայն մարդու
թեանք իրանց ազգային վրաց լեզուն, Միսթոլի
հարած քրիստոնէական առաւելի գործածութիւնը,
և կեղեցու բազմաթիւ աւանդութիւնները, քրիս
տոնէական նախապայքարութիւնները և սովորու
թիւնները, ընտանեկան և հասարակական վարք ու
կարգը, որ ոչնչով չէ զանազանվում իրանց արիւ
նակից ուղղափառ վրացու ունեցածից, աւելի հեշ
տութեամբ կարող էին ընտելանալ քրիստոնէական
տիրապետութեան խաղաղ կենցաղաւարտութեան,
քան թէ չէլքէլքները: Խորհանցու այդ եղբրական
ազգը, որը, մինչև մահմադարականութիւնը եղել է կու
պաշտ և կատարել է խօզ ու ծառի *) խոստապա
հանք աստուածային պատուէրները, իսկ մահմադա
րականութիւնից յետ չէ ունեցել ոչինչ ազգայնութիւն
և ցեղային կապ դրացի քրիստոնէայ ազգերի հետ,
որ չը լինէր այնչափ բիրտ, այնչափ խորթ և այնչափ
խորշող ուղղափառ տէրութեան իշխանութիւնից:
Միջինուրդի պարպէս չեն աշխարհները. երբ չէլքէ
ներ հարկեր տարի արդէն տարիներ իրաւութեան
մէջ, նորանից առաջ մարդկային գոհեր են նուր
բիւն եղել իրանց սրբազան ծառի, աշխարհները
վաթսուս տարի միայն առաջ զարկուտ են հնչեց
րել և ճգնվելու եղել Մամբայի և խուցուբանի
բարձրութիւնների վրա, ուր մինչև այժմ ևս գոհեր
են բերում մարթիւր աւերակ կեղեցիկների մուտքի
մէջ և երկրպագաբար օգնութիւն խնդրում նորա
նից իրանց հիւանդների և ցաւազարների համար:
Պատերազմի ժամանակ ևս տեսայ այն տեղ մի
ծերունի, որը չուզեցաւ թողնել իր տունը մնա
ցել էր մեր օֆիցիաների խնամքի տակ: Նա դեռ
պարզ յիշում էր այն ժամանակը, երբ կարգութի
ցիք բոլորը շերտաւոր քրիստոնէաներ էին և տօն

օրերը միշտ յաճախում էին ճշգրտեամբ խուցու
բանի սրբակոն վարդապետներին: Երբեմն խօս
քերի ճշմարտութիւնը գուցէ հաստատվի ևս նո
րանով, որ խուցուբանի մինչև հիմայ նշանակում է
վրաց լեզուով աբեղայի խօսք, իսկ Սամբա
— կրօնորութիւն: Մահմադարական վրացիք մնացել
են վերջապէս այն աստիճան ամուր իրանց վարքի
կրօնի սկզբնականներին, որ բազմակրօնները մինչև
այժմ ոչինչ կեղծով չէ պատուաւորում նոյա վար
քին, վանորդ էլ թէ ու չեղում է քրիստոնէա
կան միակրօնիւնից, նա երկարվում է հասարա
կութեան նախապայքարին: Նշանդիւրը և ամուսնա
կան և հարսանաց ծէսերը մնացել են մինչև ան
գամ առաջիկայ սովորութեամբ: Այս ամենից յետ
հատկապէս է թէ որչափ դիւրին է և հաւանական
յուսույ որ այժմ Տաճկաստան գաղթող իսլամա
դարան վրացիք, մնալով իրանց տեղերը շատ չու
տով կը կապվէին իրանց միայն և միակեզու
քրիստոնէայ եղբայրների հետ, փոփոխելով նոյա
հետ ինչպէս իրանց աշխատանքների մնացորդը,
այնպէս էլ լուսաւորութեան արդիւնքը: Վա
նորոյ շատ ցաւալի է որ կովկասի վարդապետ
ոչինչ ուշադրութիւն չէ դարձնում այս հան
գանակի վրա և երբ աշխարհները պատրաստ
վում են, ի հարկի մի քանի մուսուլմանների յոր
դորանքով, գաղթել թիւրքաց Հայաստան, մեր
կողմից էլ չէ երևում ոչինչ հոգացողութիւն հա
մազեւու և պահելու այն տարրը, որը ինչպէս եր
կու տարի առաջ պատրաստում էր իր թիւրք տե
րութեան շահերը գէղեցիկ մեր գէտ, այնպէս
էլ մի երկու-երեք տասնեակ տարուց յետ պատ
րաստ կը լինի նոյնը անել թիւրքի գէտ: Բայց այդ
պահելով նոյա իրանց տեղերը կարելի կը լինի
կատարել ևս միւս մարդասիրական գործ, այն է,
ազատել Հայաստանի քրիստոնէայ ազգաբնակու
թիւնը աւելորդ մահմադարականների վրէժնորդու
թիւնից և խոտութիւնից:
P. S. Հէնց այսօր ևս հարցրել երեք աշխարհնե
րին թէ ինչու են գաղթում Թիֆլիս, նոյա պա
տակաւանեցին լեզապատառ թէ ուսմանը չուտով
նոյնից սուղալի պիտի հաւաքեն, վանորդ չաա
պում են ազատվել: Միթէ Բաթումի գնաւորա
կան գործընտանիքի համար դժուար է մի պրօփ
լամայիցով փարսելով այդ անտեղի երկիրը ու
հանգստանալ յուսակաւոր ժողովրդին:
Գրիգոր Նիկողոսեան
ՆԱՄԱԿ ԻՄԲԱԳՐԻՆ
Նոր-Նախիջևան, 27 մայիսի
Ուղարկելով ձեզ յօդուտ «Արարատեան ընկե
րութեան» հաւաքած գումարս 52 ռուբլ, խնդրում
եմ խնամախօսաբար տպել նուիրաւանայ անունները
ձեք պատուական վրայի մէջ: Ստորագրութիւնը
շարունակվում է: Այսօր Ռոստովի հայ գործա
կատարների մէջ էլ ստորագրութիւն բացվեցաւ:
Յ. Պապայանեան 5 ռուբլ, Յ. Խլիթիւսեան 5 ռ.,
Կ. Խաչատրեան 2 ռ., Կ. Չորջիկեան 3 ռ., Կ. Ա.
Խաչատրեան 2 ռ., Յ. Հայրապետեան 3 ռ., Ս. Նա
զիրեան 2 ռ., Կ. Հեքիմեան 2 ռ., Ս. Մանուկեան
2 ռ., Ս. Երեցիկեան 2 ռ., Յ. Խաղիկեան 2
ռ., Թ. Բելլէ—Շաֆիեան 3 ռ., Խ. Կիւնչեան 2
ռ., Ե. Օտապալեան 1 ռ., Ն. Բոնումեան 3 ռ.,
Ս. Տրապիկոնեան 2 ռ., Պ. Պալմիւսեան 1 ռ.,
Կ. Թումանեան 3 ռ., Ս. Կարապետեան 2 ռ.,
Գանի մի անձինք 5 ռ.: Ընդամենը 52 ռուբլ:
Յ. Պապայանեան
ՆԱՄԱԿ ԻՄԲԱԳՐԻՆ
Մոսկով, 28 մայիսի
Ներկայ տարվայ յունիսի 15-ին Գէոյներ
(Dexner) գրաւանաւոր ձեռքով ուղարկած է
«Փորձ» ամսական լրագրին 10 ռուբլի մի տա
րվայ բաժանորդագրին յիշեալ ամսականութիւնը, բայց

Խմբագիր-Հաստատվող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ